բի գուրկ էր մնացել [1]) և միւս կողմից ևս խոստմունքս կատարած լինիմ, որ Սաղիանի վանքը մտած ժամանակս խոստացայ։

Բայց տաճարի շինութեան լրացնելն՝ իմ հաշուովը վարպետաց բացել տուեցի տաճարի հարաւային պատից մի դուռն, որ ամենակարևորն էր, և կարելի է ասել, աւելի շքեղացրեց տաճարը, և յիրաւի այնքան գեղեցիկ և յարմար շինեց վարպետ Սիմէօնն այս նոր դուռը, որ տեսնողը ամենևին չէ կարծում, թէ նոր է բացուած, որոյ վերայ ծախս է եղած հարիւր մանէթից աւելի։ [2]) Եւ այս իրաւամբ՝ նոր դրանս ճակատին փորագրել տուեցի հետևեալ արձանագրութիւնը՝

«Առաջնորդ Հայոց Թեմին Շամախւոյ Մեսրովբ (Արբ) եպիսկոպոս Սմբատեանց Նախիջևանցի էօծ զտաճարս՝ յետ բանալոյ զՀարաւային նոր դուռս

Արձանագրութեանս մօտ նկարածէ արեգակնային ժամացոյցս՝



---

[1]) Սաղիան գիւղումն կայ հին կիսաւեր եկեղեցի, որը թողած՝ գալիս են վանքը կիւրակէ օրերը։ Բայց մտադիր են շինելու։

[2]) Դրանս վրայ 1893 թուին դարձեալ իմ հաշուով շինել տուեցի մի զարդարուն ծածկոց ժեշտապատ։